



57. ԹԱՔԱՎՈՐԻ ԽԻՂՃԸ

Մե թաքավոր ու վագիր չորերը փոխում, էթում են իրանց ժողովրթի մեջ ման գալում, ըստու-ընդու հետ խոսում, որ տենան՝ ժողովուրթը իրանց մասին ինչ ա խոսում: Շատ անքամ էլ դաստու թաքավորին քոֆում են: Շատերը էս մարդկանց խորուրթ են տալում, որ լեզուները իրանց քաշեն՝ խողը իմաց կըտա, շատերն էլ հայհոյում են, որ թաքավորի էսենց-էնենցը, վատ մարթ ա:

Էսենց ման գալով, լրտեսություն անելով էթում են մե գեղ: Օրը չոգ էր: Մե դռան մոտ կայնան, տանտիրոջից ջուր ուզեցին: Տանտերը հրավիրեց նստեն չարդաղի տակ թախտին, ինքը հարսներին ձեն տվեց:

—Հարսներ՛ր, դոնաղ ունենք, խմելու բան բերեք:

Հարսները փարչերը ու կրուչկեքը ձեռներին վազան: Մեծ հարսը կայնավ թաքավորի առեչը, պստիկը՝ վագրի հառեչը, կրուչկեքը նռան ջրով լցին, տվեցին ըստոնցը: Ոման, օխայ արին, չնորակալ հելան ու գացին:

Գացին գեղի մեջ, մե տեղ տեսան 4-5 մարդ կայնե, խոսում են, բարև տվին, կայնան:

Թաքավորն ասավ.—Օտար մարդիկ ենք, քիչ ջուր չի՞ հըլնի՛ խմենք:

—Օտարը մեր դոնաղն ա, մեր աչքի լուսն ա,—ասին էս մարդիկ, և ամեն մեկը քաշում ա, որ տանա իրա տուն:

—Տուն գալու ժամանակ չունենք, ծարավ ենք,—ասավ վագիրը,—չնորակալ ենք, որ դոնաղասեր եք:

Էս մարդիկ ձեն տվին, թե՛ աղջիկներ՛ր, ջո՛ւր բերեք: Տասը տեղից փարչերը ու կրուչկաները ձեռներին հարսներն ու աղջիկները նռան ջուր բերին: Զուր խմեցին, չնորակալ հելան ու գնացին:

Որ պալատ խասան, թաքավորը հրաման տվեց.—Վագիր՛ր, նռան ծառերի հարկը հինգ անգամ ավելացրո՛ւ, մեզ հայհոյող մարդկանցից քսանը բանտարկի՛:

Մյուս տարի էլի էդ ժամանակ գնացին էդ գեղ ու ջուր ուզին:

Գյուղացիները ջուր բերին, ըստոնք խման, թաքավորն ասավ.— Անցյալ տարի ջուր ուզինք, քսան տեղից նուան ջուր բերիք, էս ի՞նչ բան ա, նուան ջուր չունե՞ք:

—Թաքավորի վիզը կոտրի, նուան ծառերի վրա էնենց հարկ դրեց, որ ծառերը կտրեցինք, տեղը ցորեն ցանեցինք:

Թաքավորը հրաման տվեց՝ ցորենի հարկը տաս անգամ ավելացնեն:

Աչնանը եկան, ասին.—Օտար մարդ ենք, սոված ենք, քիչ հարկ չի՞ ճարվի, փողը կըտանք:

Բերեցին էրկու գարե գնդիկ:

Մեկն ասավ.—Օտար մարդ եք, փող պետք չի:

—Զեր գյուղում ցորեն չե՞ն ցանում,—հարցրեց թաքավորը:

—Ցանում ինք, էս տարի չենք ցանե, թաքավորը ցորենի հարկը տաս անգամ ավելացրել ա:

Գնացին, մյուս տարի էլի էկան: Տեսան՝ էս գյուղում դափ են տփում, տոճկում են, էչի նման զոռում են:

—էս ի՞նչ բան ա,—հարցրեց թաքավորը:

—Գարի էինք ցանել, կարկուտը տարավ, ժողովուրթը զոռում ա, որ թաքավորը մարդկանց բաժինը կտրեց. Աստված էլ էչի բաժինը տարավ: Օտարականնե՛ր, ներո՛ղ կրլինեք, ո՛չ հաց ունենք, ո՛չ էլ ջուր տալու ժամանակ կա,—ասավ մեկը ու էչի նման տոճկալեն գնաց դժուլիների յանը:

